<u>Հ Ա Յ Տ Ա Հ Ր Ա Վ Ե Ր</u>

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Կ Ր Թ Ո Ւ Թ Յ Ա Ն Բ Ա Ր Ե Լ Ա Վ Ո Ւ Մ Ծ Ր Ա Գ Ի Ր**

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ**

**Ֆինանսավորման աղբյուր՝ ՎԶՄԲ Վարկ No. 8342-AM**
**ՄԶԸ Փոխառություն No. 5387-AM**

**ՄՄԳ-1/2016**

Սույն հայտարարությունը տրված է, ի լրումն Ծրագրի ընդհանուր գնման հայտարարությանը, որը հրապարակվել է UN Development Business պարբերականի 2016թ.-ի մայիսի 12-ի համարում:

1. «Կրթության բարելավում» ծրագիրն իրականացնելու նպատակով՝ Միջազգային զարգացման ընկերակցության (ՄԶԸ), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) հետ կնքված համաձայնագրերի ներքո, և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի միջև 2015թ դեկտեմբերի 24-ին կնքված 6/15-CIF պայմանագրի շրջանակներում նախատեսվում է լաբորատոր սարքավորումների ձեռքբերում:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը հրավիրում է իրավասու հայտողներին փակ ծրարով հայտեր ներկայացնել Երևանի պետական համալսարանի մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարական կենտրոնի համար լաբորատոր սարքավորումներ մատակարարելու համար՝ ըստ ստորև նշված խմբաքանակների:

| Խմբաքանակ 1 – Բարձր արդյունավետության լաբորատոր սարքավորումներ | | | |
|---|---|---|---|
| Առարկա | Ապրանքների սեղմ նկարագրություն | Քանակ | Վերջնական առաքման վայր |
| 1. | Բարձր արդյունավետության հեղուկ քրոմատագրային համակարգ մեծ կենսամոլեկուլների բաժանման համար | 1 փաթեթ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 2. | Կրկնակի փնջով ՈւՖ-Տեսանելի տիրույթի սպեկտրալուսաչափ | 1 փաթեթ | |

| Խմբաքանակ 2 – Լաբորատոր սարքավորումներ | | | |
|---|---|---|---|
| Առարկա | Ապրանքների սեղմ նկարագրություն | Քանակ | Վերջնական առաքման վայր |

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Անթթվածնային խցիկ | 1 միավոր | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 2. | Կենսագործընթացների կառավարման համակարգ | 1 փաթեթ | |
| 3. | Գերցածր ջերմաստիճանային տիրույթի սառնարան - 86°C | 1 փաթեթ | |
| 4. | Ցենտրիֆուգ | 1 միավոր | |
| 5. | Կենսաանվտանգության պահարան | 1 միավոր | |
| 6. | Լամինար պահարան | 1 միավոր | |
| 7. | Սառնարան +4°C | 1 միավոր | |
| 8. | Գերմաքուր ջրի մաքրման համակարգ | 1 փաթեթ | |
| 9. | Ֆազակոնտրաստային մանրադիտակ | 1 միավոր | |
| 10. | Վերլուծական կշեռք | 1 միավոր | |
| 11. | Լաբորատոր կշեռք | 1 միավոր | |
| 12. | Ուղղահայաց ժել-էլեկտրաֆորեզի համակարգ | 1 միավոր | |

*Հայտատուները իրավունք ունեն դիմելու մեկ լոտի կամ երկու լոտերի համար: Հայտերը կգնահատվեն ըստ լոտերի: Զեղչերը, եթե այդպիսիք կլինեն, պետք է առաջարկվեն յուրաքանչյուր լոտի համար և կուսումնասիրվեն հայտի գնահատման ժամանակ:*

3. Մրցույթը անցկացվելու է համաձայն Համաշխարհային բանկի «Գնումներ՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառություններով և Միջազգային Զարգացման Ընկերակցության վարկերով» (հունվար 2011) ուղեցույցի՝ Միջազգային Մրցակցային Գնումների ընթացակարգի համաձայն, մրցույթին կարող են մասնակցել բոլոր իրավասու հայտողները:

4. Իրավասու շահագրգիռ հայտողները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում և ձեռք բերել մրցութային փաթեթը յուրաքանչյուր օր, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից, ժամը 11:00-ից - 13:00-ը և 14:00-ից - 16:30-ը, ստորև բերված հասցեով:

5. Շահագրգիռ հայտողները կարող են գնել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը անգլերեն լեզվով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում գրավոր դիմումի համաձայն՝ կատարելով անհատույց վճարում 50000 ՀՀ դրամի չափով կամ համարժեք գումար ԱՄՆ դոլարով կամ Եվրոյով: Վճարման ձևը բոլոր հայտողների համար բանկային փոխանցումն է՝ հետևյալ բանկային հաշվին.

Բանկային տվյալներ.

- ՀՀ դրամով վճարումների համար

Ստացող - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Ստացող բանկ – Արդշինբանկ, հ/հ 2470100009060000

- ԱՄՆ դոլարով վճարումների համար.
  Միջնորդ բանկ. CITIBANK, NEW YORK
  Սվիֆտ հասցե՝ CITIUS33
  Ստացողի բանկ. Արդշինբանկ, հ/հ 2470100009061000
  Սվիֆտ հասցե՝ ASHBAM22
  Ստացող՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
- Եվրոյով վճարումների համար.
  Միջնորդ բանկ. Deutsche Bank AG, Frankfurt
  Սվիֆտ հասցե՝ DEUTDEFF
  Ստացողի բանկ. Արդշինբանկ, հ/հ 2470100009060049
  Սվիֆտ հասցե՝ ASHBAM22
  Ստացող՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև բերված հասցեով, մինչև 2016թ. հունիսի 23-ը ժամը 15:00-ն (տեղական ժամանակով): Հայտերի էլեկտրոնային ներկայացումը չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հայտողների ներկայացուցիչների ներկայությամբ՝ ստորև բերված հասցեով, 2016թ. հունիսի 23-ին, ժամը 15:00–ին (տեղական ժամանակով):

7. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն հայտի մրցութային երաշխիքով, որը կազմում է ոչ պակաս քան ստորև ներկայացված գումարները յուրաքանչյուր նշված խմբաքանակի համար կամ համարժեք գումար ազատ փոխարկելի արտարժույթով:
Խմբաքանակ 1՝ 2200 ԱՄՆ դոլար
Խմբաքանակ 2՝ 6300 ԱՄՆ դոլար

Հայտողը յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ներկայացնի առանձին բանկային երաշխիք:

8. Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 0025, Ա. Մանուկյան 1
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, 210 սենյակ
Հեռախոս՝ (+37460) 710009
Էլ. փոստ՝ gnumner.eph@mail.ru
Վեբ կայք՝ www.ysu.am
Դիմել՝ Ալլա Մակարյանին